



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ
ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ (DIGEST)
N11,12(12,13) 2009թ. սեպտեմբերի 21- նոյեմբերի 20

17 դեկտեմբերի, 2009թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|-----------------------------------------------------------------------------|----|
| <i>1. Հարկային և մաքսային օրենսդրության նորություններ</i> | 3 |
| 1.1 Օրենքներ | 3 |
| 1.2 ՀՀ կառավարության որոշումներ | 4 |
| 1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ | 6 |
| <i>2. Հարակից (տնտեսական) օրենսդրության նշանակալի փոփոխություններ</i> | 8 |
| <i>3. Հարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ</i> | 10 |
| 3.1 Կառուցվածք և գործառույթներ | 10 |
| 3.2 Ծրագրեր և կատարողականություն | 10 |
| 3.3 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների | 11 |
| 3.4 Միջազգային համագործակցություն | 11 |
| 3.5 Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում | 13 |
| 3.6 Հետադարձ կապ մամուլի արձագանքներ և «թեժ գծի» վերլուծություն | 13 |
| 3.7 Հարկային և մաքսային վիճակագրական մի քանի թվեր | 14 |

1. Հարկային և մաքսային օրենսդրության նորություններ

1.1 Օրենքներ

| | |
|-------------------|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| Փաստաթուղթ | “Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ ունեցող և ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում և գանձվում” Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին” ՀՀ օրենք |
| Ամսաթիվը և համարը | 17 սեպտեմբերի, 2009թ., 174-Ն |
| Հրապարակումը | ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 52 (718), 16.10.09թ. |
| Ուժի մեջ է | 17 հոկտեմբերի, 2009թ. |

Համառոտ նկարագիր

Կատարված փոփոխությամբ կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ ունեցող և ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա ապրանքների ցանկում, որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում ու գանձվում, 2710 19 210 ծածկագրին դասվող „Ավիավառելիք SU-1” բառերը փոխարինվել են „Ավիավառելիք” բառով, իսկ 2710 19 990 ծածկագրին դասվող „Ավիայուղ ՄՄ-8Պ” բառերը՝ „Ավիայուղ” բառով:

| | |
|-------------------|-------------------------------------------------------------------------------------|
| Փաստաթուղթ | “Մաքսային ծառայության մասին” ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին “ ՀՀ օրենք |
| Ամսաթիվը և համարը | 8 հոկտեմբերի, 2009թ., 171-Ն |
| Հրապարակումը | ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 52(718), 16.10.09թ. |
| Ուժի մեջ է | 26 հոկտեմբերի, 2009թ. |

Համառոտ նկարագիր

Համաձայն “Մաքսային ծառայության մասին” Հայաստանի Հանրապետության 2002թ. հուլիսի 3-ի 402-Ն օրենքում կատարված փոփոխության՝ 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետից հանվել են “անվանական զենքով պարզևատրում” բառերը:

| | |
|-------------------|------------------------------------------------------------------------------------|
| Փաստաթուղթ | “Հարկային ծառայության մասին” ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին” ՀՀ օրենք |
| Ամսաթիվը և համարը | 8 հոկտեմբերի, 2009թ., 172-Ն |
| Հրապարակումը | ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 52(718), 16.10.09թ. |
| Ուժի մեջ է | 26 հոկտեմբերի, 2009թ. |

Համառոտ նկարագիր

Համաձայն «Հարկային ծառայության մասին» ՀՀ 2002թ. հուլիսի 3-ի 407-Ն օրենքում կատարված փոփոխության՝ ուժը կորցրած է ճանաչվել օրենքի 24-րդ հոդվածի 7-րդ կետը և փոփոխություն կատարվել նույն հոդվածի 8-րդ մասում, ըստ որոնց երկարամյա ծառայության, ծառայողական պարտականությունները և հատուկ առաջադրանքները գերազանց կատարելու, ինչպես նաև աշխատանքի նկատմամբ նվիրվածության համար հարկային ծառայողի նկատմամբ կիրառվող խրախուսանքի տեսակներից հանվել է անվանական զենքով պարզևատրումը:

| | |
|-------------------|-------------------------------------------------------------------------------------|
| Փաստաթուղթ | “Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին” ՀՀ օրենք |
| Ամսաթիվը և համարը | 16 սեպտեմբերի, 2009թ., 178-Ն |

| | |
|--------------|-----------------------------------------------|
| Հրապարակումը | ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 52(718), 16.10.09թ. |
| Ուժի մեջ է | 26 հոկտեմբերի, 2009թ. |

Համառոտ նկարագիր

Հայաստանի Հանրապետության 2000թ. հուլիսի 6-ի Մաքսային օրենսգրքում կատարվել են լրացումներ, համաձայն որոնց.

1. մաքսային մարմինները պարտավոր են նույն օրենսգրքի 130 հոդվածի 4-րդ մասով նախատեսված ապրանքների և (կամ) տրանսպորտային միջոցների ներմուծման դեպքում այդ մասին անհապաղ հայտնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանություն (լրացումը կատարվել է 14-րդ հոդվածի 2-րդ մասում),

2. հետախուզման մեջ գտնվող, ինչպես նաև շարժիչի կամ նույնացման համարի վերադառված կամ ջնջված համարներով կամ հափշտակության այլ հատկանիշների առկայությամբ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 8702, 8703, 8704, 8705 ապրանքային դիրքերին դասվող ապրանքներ և (կամ) տրանսպորտային միջոցներ Հայաստանի Հանրապետություն ներմուծելու դեպքում տեղափոխողը կամ նրա լիազորած անձը ներմուծմանը հաջորդող տասնօրյա ժամկետում մաքսային մարմին է ներկայացնում ժամանակավոր հայտարարագիր՝ վճարելով մաքսային վճարները, ինչը հիմք է այդ ապրանքների և (կամ) տրանսպորտային միջոցների ժամանակին չհայտարարագրման համար օրենքով սահմանված տույժերից և վարչական պատասխանատվությունից ազատելու համար (130-րդ հոդվածը լրացվել է 4-րդ մասով),

3. վերոնշյալ ապրանքների և (կամ) տրանսպորտային միջոցների համար մաքսային հայտարարագիրը մաքսային մարմին է ներկայացվում նշված ապրանքների և (կամ) տրանսպորտային միջոցների նկատմամբ բարեխիղճ ձեռք բերողի սեփականությունը ճանաչելու մասին դատական ակտն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում (130-րդ հոդվածը լրացվել է 5-րդ մասով):

1.2 ՀՀ կառավարության որոշումներ

| | |
|-------------------|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| Փաստաթուղթ | “Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մարտի 24-ի թիվ 236 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին” Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում |
| Ամսաթիվը և համարը | 1 հոկտեմբերի 2009թ., 1120-Ն |
| Հրապարակումը | ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 51(717), 14.10.09թ. |
| Ուժի մեջ է | 15 հոկտեմբերի 2009թ. |

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել է, որ հայտարարատուն մաքսային հայտարարագիրը և դրանում նշված փաստաթղթերը ներկայացնում է ապրանքների գնումն իրականացնող պաշտոնատար անձին, իսկ վերջինս հաշվառում է հայտարարագիրը և դրան կից փաստաթղթերը:

Հանվել է գնման արձանագրություն կազմելու վերաբերյալ դրույթը, փոխարենը սահմանվել է դրույթ, համաձայն որի՝ գնումն իրականացնող պաշտոնատար անձը մաքսային կանոնների խախտում հայտնաբերելու դեպքում կազմում է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրություն:

| | |
|-------------------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| Փաստաթուղթ | “Հայաստանի Հանրապետության և Եվրոպական համայնքների հանձնաժողովի միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված հարկային, մաքսային և այլ պարտադիր վճարների գծով արտոնությունների կիրառման կարգը հաստատելու մասին” ՀՀ կառավարության որոշում |
| Ամսաթիվը և համարը | 23 սեպտեմբերի, 2009թ., 1112-Ն |
| Հրապարակումը | ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 49(715), 07.10.09թ. |
| Ուժի մեջ է | 17 հոկտեմբերի, 2009թ. |

Համառոտ նկարագիր

Որոշման համաձայն հաստատվել է Հայաստանի Հանրապետության և Եվրոպական համայնքների հանձնաժողովի միջև կնքված Շրջանակային համաձայնագրով նախատեսված հարկային, մաքսային և այլ պարտադիր վճարների գծով արտոնությունների կիրառման կարգը՝ համաձայն հավելվածի:

Ուժը կորցրած է ճանաչվել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարության 2001 թվականի ապրիլի 26-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության և Եվրահամայնքի հանձնաժողովի միջև կնքված ֆինանսավորման հուշագրերով սահմանված հարկային, մաքսային և այլ պարտադիր վճարների գծով նախատեսված արտոնությունների կիրառման մասին» հրահանգը հաստատելու մասին» N 02/520 հրամանը:

| | |
|-------------------|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| Փաստաթուղթ | «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. օգոստոսի 7-ի N941-Ն և 2009թ. հունվարի 15-ի N40-Ն որոշումներում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում |
| Ամսաթիվը և համարը | 9 հուլիսի, 2009թ., 1134-Ն |
| Հրապարակումը | ՀՀ պաշտոնական տեղեկագիր N° 51(717), 14.10.09թ. |
| Ուժի մեջ է | 15 հոկտեմբերի, 2009թ. |

Համառոտ նկարագիր

Որոշմամբ հետաձգվել է N 941-Ն որոշման 60-րդ` «Հարկային միջնորդների ինստիտուտի ներդրում» միջոցառման կատարման ժամկետները: Այն նախատեսվում է իրականացնել 01.02.09-31.12.10 ժամանակահատվածում:

| | |
|-------------------|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| Փաստաթուղթ | «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 1-ի N 946-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում |
| Ամսաթիվը և համարը | 8 հոկտեմբերի, 2009թ., N 1144-Ն |
| Հրապարակումը | ՀՀ պաշտոնական տեղեկագիր N° 53 (719) 21.10.09թ. |
| Ուժի մեջ է | 1 հունվարի, 2010թ. |

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել է, որ վիճակահանության անցկացման ժամանակահատվածում ՀՀ կառավարության 30.10.2008թ. «Հարկային վարչարարությանն օժանդակության նպատակով վիճակահանության անցկացման և պարզևավճարների տրամադրման կարգը հաստատելու մասին» N1330-Ն որոշմամբ (որոշմամբ հաստատված կարգի 12.1-րդ կետի 2-րդ ենթակետում նշված) սահմանված գործունեության տեսակների մասով հսկիչ-դրամարկղային մեքենաների համար պետք է կիրառվեն կոմիտեի կողմից հաստատված տարբերակված գույնի ժապավեններ: Յուրաքանչյուր ամսվա, եռամսյակի կամ տարվա համար սահմանված ժապավենների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում և տեղադրվում է հարկային մարմնի ինտերնետային կայքում:

| | |
|-------------------|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| Փաստաթուղթ | «Հայաստանի Հանրապետության կառավարության 2004թ. օգոստոսի 26-ի N 1325-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում |
| Ամսաթիվը և համարը | 8 հոկտեմբերի, 2009թ., N1146-Ն |
| Հրապարակումը | ՀՀ պաշտոնական տեղեկագիր N° 53(719) 21.10.09թ. |
| Ուժի մեջ է | 1 հունվարի, 2010թ. |

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել է, որ ՀՀ կառավարության 30.10.2008թ. «Հարկային վարչարարությանն օժանդակության նպատակով վիճակահանության անցկացման և պարզևավճարների տրամադրման կարգը հաստատելու մասին» N1330-Ն որոշմամբ նախատեսված ոլորտներում գործունեություն իրականացնող սուբյեկտները ՀԴՄ կտրոն տրամադրելիս պետք է կիրառեն միայն ՀՀ կառավարության 01.06.05թ. «Նսկիչ-դրամարկղային մեքենաներին և դրանց շահագործման համար օգտագործվող ժապավեններին ներկայացվող պահանջները հաստատելու մասին» N946-Ն որոշմամբ սահմանված պահանջներին բավարարող (տարբերակված գույնի) ժապավեններ: Նշված ոլորտներում ՀԴՄ կտրոն տրամադրելիս այլ ժապավենների կիրառումը կդիտվի որպես ՀԴՄ շահագործման կանոնների խախտում:

| | |
|------------|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| Փաստաթուղթ | «Հայաստանի Հանրապետության կառավարության 2000թ. դեկտեմբերի 31-ի N 902 որոշման մեջ լրացում կատարելու» մասին ՀՀ կառավարության որոշում |
|------------|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|

| | |
|-------------------|-----------------------------------------------|
| Ամսաթիվը և համարը | 15 հոկտեմբերի, 2009թ., N1157-Ն |
| Հրապարակումը | ՀՀ պաշտոնական տեղեկագիր №54(720) 28.10.2009թ. |
| Ուժի մեջ է | 7 նոյեմբերի, 2009թ. |

Համառոտ նկարագիր

Որոշման ընդունումը պայմանավորված է ՀՀ-ում ապօրինի անտառահատումների դեմ պայքարի, մասնավորապես՝ ՀՀ մաքսային տարածքից անմշակ փայտանյութի արտահանման կանխման անհրաժեշտությամբ:

Որոշմամբ արգելվում է «Արտահանում՝ ազատ շրջանառության համար», «Ժամանակավոր արտահանում», «Ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար» և «Ներմուծում՝ անմաքս առևտրի խանութ» մաքսային ռեժիմներով ՀՀ մաքսային սահմանով անմշակ փայտանյութի տեղափոխումը, որի արդյունքում հնարավոր կլինի հսկողություն իրականացնել անմշակ փայտանյութի արտահանման նկատմամբ:

| | |
|-------------------|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| Փաստաթուղթ | «Հայաստանի Հանրապետության կառավարության 07.08.2008թ. N 941-Ն և 15.01.2009թ. N 40-Ն որոշումներում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում |
| Ամսաթիվը և համարը | 6 նոյեմբերի, 2009թ., N1262-Ն |
| Հրապարակումը | ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 57(723)18.11.2009թ. |
| Ուժի մեջ է | 19 նոյեմբերի, 2009թ. |

Համառոտ նկարագիր

Որոշմամբ ուժը կորցրած են ճանաչվում ՀՀ կառավարության 07.08.2008թ. «ՀՀ պետական եկամուտների (հարկային և մաքսային) վարչարարության ռազմավարության 2008-2011թվականների ծրագիրը հաստատելու մասին» N 941-Ն որոշման N1 հավելվածի Բ մասի 65-րդ կետը և ՀՀ կառավարության 15.01.2009թ. «ՀՀ կառավարության 2009թ. գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N 40-Ն որոշման N1 հավելվածի 240-րդ կետը:

1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ

| | |
|-------------------|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| Փաստաթուղթ | “ Հայաստանի Հանրապետության հարկային տեսչության 1998 թվականի նոյեմբերի 16-ի N01/55 հրամանում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին” ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման |
| Ամսաթիվը և համարը | 16 սեպտեմբերի, 2009թ., 2617-Ն |
| Հրապարակումը | ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 28 (346), 15.10.2009թ. |
| Ուժի մեջ է | 25 հոկտեմբերի, 2009թ. |

Համառոտ նկարագիր

“Հանրակրթության մասին” ՀՀ օրենքի ընդունման հետ կապված փոփոխություն է կատարվել “Ավելացված արժեքի հարկի մասին” ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ կետերում: Այդ փոփոխությունների հետ կապված օրենքի դրույթների կիրառումն ապահովող հրահանգի դրույթները համապատասխանեցվել են օրենքի պահանջներին, մասնավորապես հրահանգի 1-ին կետը վերախմբագրվել է, ըստ որի ավելացված արժեքի հարկից ազատվում են հանրակրթական ուսումնական հաստատությունները, մանկապատանեկան ստեղծագործական և գեղագիտական կենտրոնները, երաժշտական, նկարչական, արվեստի և գեղարվեստի դպրոցները, մարզադպրոցները, պրոֆտեխնիկական ուսումնարանները, որակավորման և վերաորակավորման միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունները՝ ուսման վարձի մատով: Ուսման վարձ է համարվում ուսումնական հաստատությունների կողմից իրականացվող՝ հիմնական, լրացուցիչ կամ հետբուհական կրթական ծրագրերով նախատեսվող առարկաների (դիսցիպլինների, գիտելիքների, հմտությունների) դասավանդման ու գործնական պարապմունքների անցկացման համար վճարվող գումարը:

Հրահանգում կատարված լրացմամբ սահմանվել է, որ ավելացված արժեքի հարկից ազատված գիտահետազոտական աշխատանքների մեջ չեն ներառվում նաև դրանց բաղադրության որոշումը,

գիտությանը հայտնի մեթոդների հիման վրա արտադրության տեխնոլոգիական պրոցեսների նախագծումը կամ օպտիմալացումը:

| | |
|-------------------|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| Փաստաթուղթ | “Ավելացված արժեքի հարկի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի կիրառման որոշ հարցերի վերաբերյալ” ՀՀ ֆինանսների նախարարի և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի համատեղ պաշտոնական պարզաբանումը, |
| Ամսաթիվը և համարը | 10 սեպտեմբերի, 2009թ., 6 |
| Հրատարակումը | ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 27 (345), 01.10.2009թ. |
| Ուժի մեջ է | 10 հոկտեմբերի, 2009թ. |

Համառոտ նկարագիր

Պարզաբանվել են շահագործման ժամկետ ունեցող և արտադրական կամ այլ առևտրային նպատակներով փաստացի օգտագործված գույքի օտարման դեպքում “Ավելացված արժեքի հարկի մասին” ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերի դրույթների կիրառման վերաբերյալ որոշ հարցեր, համաձայն որոնց հատուկ բանաձևերի միջոցով հաշվարկվում է **հաշվանցվող գումարներից նվազեցման ենթակա գումարը (ՀԳՆԵԳ)**: Եթե տվյալ դեպքում գույքի փաստացի շահագործման ժամկետը գերազանցում է տվյալ տեսակի գույքի համար օրենքով սահմանված ամորտիզացիոն նվազագույն ժամկետը, ապա հաշվանցվող գումարների նվազեցում չի կատարվում:

Նշված բանաձևերով հաշվարկվում է հաշվանցվող գումարներից նվազեցման ենթակա գումարը, մասնավորապես՝ նախկինում «ներմուծում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծված, գործունեության իրականացման ընթացքում որոշակի ժամանակ օգտագործելուց հետո «վերաարտահանում» մաքսային ռեժիմով ապրանքների արտահանման դեպքերում:

Պարզաբանվել է նաև, որ նշված կարգով հաշվանցվող գումարներից ԱԱՀ-ի գումարների նվազեցում կատարելուց հետո դուրս գրված գույքը որպես նույն նպատակային նշանակություն ունեցող գույք օտարելու դեպքում հաշվանցվող գումարները ավելացվում են հաշվարկված՝ հաշվանցվող գումարներից նվազեցման ենթակա գումարի և գույքի օտարման ժամանակ հաշվարկվող՝ հաշվանցվող գումարներից նվազեցման ենթակա գումարի դրական տարբերության չափով: Ընդ որում՝ գույքի օտարման ժամանակ հաշվանցվող գումարներից նվազեցման ենթակա գումարը հաշվարկելիս պարզաբանմամբ սահմանված կարգով կատարված նվազեցումը հաշվի չի առնվում:

| | |
|-------------------|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| Փաստաթուղթ | “Ավելացված արժեքի հարկի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի 6.1-ին հոդվածի կիրառման որոշ հարցերի մասին” ՀՀ ֆինանսների նախարարի և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի համատեղ պաշտոնական պարզաբանումը |
| Ամսաթիվը և համարը | 10 սեպտեմբերի, 2009թ., 7 |
| Հրատարակումը | ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 27 (345), 01.10.2009թ. |
| Ուժի մեջ է | 10 հոկտեմբերի, 2009թ. |

Համառոտ նկարագիր

Պարզաբանվել են “Ավելացված արժեքի հարկի մասին” ՀՀ օրենքի 6.1-րդ հոդվածի՝ օրենքով սահմանված ծածկագրերին դասվող ապրանքների ներմուծման ժամանակ ԱԱՀ-ի գումարների հետաձգման հետ կապված որոշ հարցեր, մասնավորապես՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6.1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ ընտրված կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներդրումային ծրագրերի շրջանակներում, 300 մլն դրամը գերազանցող՝ նույն հոդվածով նշված ապրանքներից բացի, այլ ապրանքների ներմուծման դեպքում սահմանված կարգով մաքսային մարմինների կողմից հաշվարկված ԱԱՀ-ի գումարների վճարման ժամկետը կարող է հետաձգվել երեք տարի ժամկետով:

Պարզաբանվել են նաև մինչև հետաձգված ժամկետի ավարտը նշված ապրանքները այլ անձանց օտարելու կամ օգտագործման իրավունքով այլ անձանց հանձնելու դեպքում առաջացող հարկային

պարտավորություններն ու տույժերի կիրառման կարգը:

| | |
|-------------------|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| Փաստաթուղթ | “Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության 2004 թվականի ապրիլի 2-ի “Ռեզիդենտների կողմից շահութահարկի հաշվարկման և վճարման կարգի մասին” հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության հարկային տեսչության 1998 թվականի փետրվարի 5-ի N 01/10 ու 1999 թվականի փետրվարի 11-ի N 01/8 հրամանները ուժը կորցրած ճանաչելու մասին” N 1-05/7-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին” ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման |
| Ամսաթիվը և համարը | 2009 թվականի սեպտեմբերի 30, N 2682-Ն |
| Հրապարակումը | ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 30 (348), 16.11.2009թ |
| Ուժի մեջ է | 26 նոյեմբերի, 2009թ. |

Համառոտ նկարագիր

Կատարված փոփոխությունները և լրացումները կատարվել են “Շահութահարկի մասին” ՀՀ օրենքում կատարված մի շարք փոփոխություններին և լրացումներին համապատասխան, մասնավորապես՝ 2009 թվականի համար ԱԱՀ վճարող ռեզիդենտները ներկայացնելու են ֆինանսական հաշվետվություններ (Ձև N1 և Ձև N2) և շահութահարկի հաշվարկ, իսկ ԱԱՀ վճարող չհամարվող ռեզիդենտները՝ միայն շահութահարկի պարզեցված հաշվարկ, որի ձևը հաստատվել է սույն հրամանով:

2. Հարակից (տեստական) օրենսդրության նշանակալի փոփոխություններ

| | |
|-------------------|----------------------------------------------------------------------------------------------------------------|
| Փաստաթուղթ | “Լիցենզավորման մասին” Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին” ՀՀ օրենք |
| Ամսաթիվը և համարը | 17 սեպտեմբերի, 2009թ., ՀՕ-169-Ն |
| Հրապարակումը | ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 48 (714), 30.09.09թ. |
| Ուժի մեջ է | 10 հոկտեմբերի, 2009թ. |

Համառոտ նկարագիր

Օրենքի փոփոխությամբ լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներ են համարվել ռազմական նշանակության արտադրանքի ներմուծում և արտահանում, ռազմական նշանակության արտադրանքի տարանցիկ փոխադրում և ռազմական նշանակության արտադրանքի առևտրի միջնորդական գործունեությունները:

| | |
|-------------------|--------------------------------------------------------------------------------------------|
| Փաստաթուղթ | “Պետական տուրքի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին” ՀՀ օրենք |
| Ամսաթիվը և համարը | 17 սեպտեմբեր, 2009թ., ՀՕ-167-Ն |
| Հրապարակումը | ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 48 (714), 30.09.09թ. |
| Ուժի մեջ է | 10 հոկտեմբերի, 2009թ. |

Համառոտ նկարագիր

Օրենքի փոփոխությունը պայմանավորված է “Լիցենզավորման մասին” ՀՀ օրենքում կատարված փոփոխությամբ: Օրենքի փոփոխությամբ ռազմական նշանակության արտադրանքի ներմուծում և արտահանում, ռազմական նշանակության արտադրանքի տարանցիկ փոխադրում և ռազմական նշանակության արտադրանքի առևտրի միջնորդական գործունեություն գործունեության տեսակների լիցենզիաներ տրամադրելու և դրանց գործողության ժամկետները երկարաձգելու համար սահմանվել են պետական տուրքի դրույքաչափեր:

| | |
|------------|-----------------------------------------------|
| Փաստաթուղթ | Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. |
|------------|-----------------------------------------------|

| | |
|-------------------|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| | դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ, սեպտեմբերի 22-ի N 1587-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. փետրվարի 13-ի N 125 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին |
| Ամսաթիվը և համարը | 10 սեպտեմբերի, 2009թ., N 1079-Ն |
| Հրապարակումը | ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 48 (714), 30.09.09թ. |
| Ուժի մեջ է | 1 հոկտեմբերի, 2009թ. |

Համառոտ նկարագիր

Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման մեջ կատարված փոփոխությանը համաձայն, որոշման 1-ին կետը լրացվել է հետևյալ նոր՝ “դ”, “ե”, “զ”, “Է” ենթակետերով.

դ) օտարերկրյա պետություններ ուսման կամ ծառայության գործուղված Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի զինծառայողի և նրա ընտանիքի անդամների՝ Հայաստանի Հանրապետությունից օտարերկրյա պետություն մեկնելու կամ օտարերկրյա պետությունից Հայաստանի Հանրապետություն վերադառնալու տրանսպորտային ծախսերի փոխհատուցման կարգը՝ համաձայն N 4 հավելվածի,

ե) օտարերկրյա պետություններ ուսման կամ ծառայության գործուղված Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի զինծառայողին օտարերկրյա պետությունում բնակելի տարածության վարձակալության համար դրամական փոխհատուցման կարգը՝ համաձայն N 5 հավելվածի,

զ) օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմին ծառայության մեկնող դիվանագետի և նրա ընտանիքի անդամների՝ Հայաստանի Հանրապետությունից օտարերկրյա պետություն մեկնելու կամ օտարերկրյա պետությունից Հայաստանի Հանրապետություն վերադառնալու տրանսպորտային ծախսերի փոխհատուցման կարգը՝ համաձայն N 6 հավելվածի.

Է) օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմնում ծառայող դիվանագետին օտարերկրյա պետությունում բնակելի տարածության վարձակալության համար տրամադրվող հավելավճարի չափը՝ համաձայն N 7 հավելվածի:

| | |
|-------------------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| Փաստաթուղթ | «Հայաստանի Հանրապետության կառավարության 29.11.1997թ. N 547 որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում |
| Ամսաթիվը և համարը | 29 հոկտեմբերի, 2009թ., N1230-Ն |
| Հրապարակումը | ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 57(723) 18.11.2009թ. |
| Ուժի մեջ է | 19 նոյեմբերի 2009թ. |

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել է, որ պետական մարմինները գանձված տուրքի վերաբերյալ տեղեկությունները ՀՀ ԿԱ ՊԵԿ ներկայացնելու են հետևյալ կարգով.

- այն մարմինները, որոնք չեն իրականացնում կանխիկ պետական տուրքի գանձում, յուրաքանչյուր եռամսյակի արդյունքներով տեղեկությունները ներկայացնելու են որոշման N1 հավելվածով,

- այն մարմինները, որոնք իրականացնում են նաև կանխիկ պետական տուրքի գանձում, յուրաքանչյուր եռամսյակի արդյունքներով տեղեկությունները ներկայացնելու են որոշման N2 հավելվածով,

- տեղեկությունները պետք է ներկայացվեն եռամսյակի համար, սակայն պետք է ներառեն տվյալներ յուրաքանչյուր ամսվա համար: Ընդ որում, ՀՀ արտաքին գործերի նախարարությունը N2 հավելվածով տեղեկությունները ներկայացնելու է ըստ օտարերկրյա պետություններում գործող ՀՀ դիվանագիտական ծառայության առանձին մարմինների,

- տեղեկությունները ՀՀ ԿԱ ՊԵԿ ներկայացվելու են կամ փաստաթղթային կամ էլեկտրոնային եղանակով (“Microsoft Excel” համակարգչային ծրագրի ձևաչափով):

| | |
|------------|------------------------------------------------------|
| Փաստաթուղթ | «Հայաստանի Հանրապետության կառավարության 03.06.2002թ. |
|------------|------------------------------------------------------|

| | |
|-------------------|----------------------------------------------------------------------------|
| | N674 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում |
| Ամսաթիվը և համարը | 29 հոկտեմբերի, 2009թ., N1248-Ն |
| Հրապարակումը | ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 57(723) 18.11.2009թ. |
| Ուժի մեջ է | 19 նոյեմբերի 2009թ. |

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել է, որ լիցենզավորող լիազոր մարմիններն իրենց կողմից տրամադրված լիցենզիաների մասին տեղեկությունները յուրաքանչյուր ամսվա համար մինչև այդ ամսվան հաջորդող ամսվա 15-ը տրամադրում են ՀՀ ԿԱ ՊԵԿ Ձև 1-ով, իսկ լիցենզիաների վերաձևակերպման, գործունեության իրականացման վայրի փոփոխության, գործողության ժամկետի երկարաձգման, գործողության կասեցման և դադարեցման վերաբերյալ տեղեկությունները՝ Ձև 2-ով: Որոշմամբ սահմանվում է, որ տեղեկությունները ՀՀ ԿԱ ՊԵԿ ներկայացվելու են կամ փաստաթղթային կամ էլեկտրոնային եղանակով («Microsoft Excel» համակարգչային ծրագրի ձևաչափով):

3. Հարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ

3.1 Կառուցվածք և գործառույթներ

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 17.11.09թ. N1/2185 հրամանով ՀՀ ԿԱ ՊԵԿ Հարկ վճարողների սպասարկման և հարկման ընթացակարգերի վարչության գույքի և եկամուտների հայտարարագրման բաժինը լուծարվել է, որի գործառույթները ներառվել են Հարկ վճարողների սպասարկման և հարկման ընթացակարգերի վարչության ուղղակի հարկերի ընթացակարգերի բաժնում:

3.2 Ծրագրեր և կատարողականություն

3.2.1 Ծրագրեր և կատարողականություն /հարկային ծառայության մասով/

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում էլեկտրոնային համակարգի ներդրման նպատակով հաստատվել և կիրառության մեջ է դրվել ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 14.10.09թ. «ՀՀ ԿԱ ՊԵԿ էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման 2009-2011թթ. հայեցակարգը հաստատելու մասին» N 2737-Ա հրամանը, որի հիմնական նպատակն է մշակել և հարկային համակարգում ներդնել առաջնակարգ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման վրա հիմնված **միասնական էլեկտրոնային կառավարման համակարգ**: Հրամանով սահմանվել են հայեցակարգի հիմնական նպատակն ու խնդիրները, իրացման հիմնական ուղղությունները, էլեկտրոնային կառավարման համակարգի ենթահամակարգերի համալիր մշակման ճարտարապետությունը և այլն: Հայեցակարգի կիրառմամբ հնարավորություն կընձեռնվի,

ա/ ավտոմատացնել հարկային մարմիններում իրականացվող բոլոր գործընթացները և գործառույթների գերակշիռ մասը,

բ/ ներդնել այլ պետական մարմինների, բանկային համակարգի և հարկ վճարողների հետ, ինչպես նաև ՊԵԿ համակարգում՝ մաքսային և հարկային մարմինների միջև, տեղեկատվական հոսքերի կառավարման արդյունավետ և արագընթաց գործող համակարգ,

գ/ ունենալ հարկ վճարողների վերաբերյալ տվյալների և տեղեկատվության ամբողջական շտեմարան,

դ/ էապես բարձրացնել հարկային ծառայողների աշխատանքի արդյունավետությունը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ **էլեկտրոնային կառավարման համակարգի բարեփոխումների խորհրդի** կողմից ստեղծված յուրաքանչյուր աշխատանքային խմբի կողմից մշակվում են էլեկտրոնային կառավարման համակարգի տեխնիկական առաջադրանքների համապատասխան մոդուլներ՝ ըստ 18 աշխատանքային խմբերի և տարբեր ոլորտների:

20.11.2009թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրամանով հաստատվել է «Հարկերի վճարումից խուսափելու ռիսկերի բացահայտման մոտեցումների վերաբերյալ» հայեցակարգը, որով սահմանվում են հարկերի վճարումից խուսափելու դեպքերը և առաջարկվող մոտեցումները:

23.11.2009թ. «ՀՀ հարկային համակարգում հարկ վճարողների սպասարկման կենտրոնների ստեղծման վերաբերյալ ծրագիրը և դրանից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրամանով նախատեսվում է ՀՀ հարկային համակարգում գործարկել հարկ վճարողների սպասարկման կենտրոններ: Հրամանով սահմանվում են հարկ վճարողների սպասարկման կենտրոնների գործարկման կարգն ու վերջիններիս գործառույթները:

3.2.2 Ծրագրեր և կատարողականություն /մաքսային ծառայության մասով/

Սույն թվականի հոկտեմբերի 16-17-ը ք. Օադկաձորում ՀՀ մաքսային ղեկավար անձնակազմի 20 աշխատողների համար կազմակերպվել է մաքսային համակարգի աշխատակիցների վերապատրաստման երկօրյա աշխատաժողով, որը նվիրված է եղել ներքին կեղծիքների բացահայտման ու կոռուպցիոն ռիսկերի գնահատմանը և կառավարման միջազգային լավագույն փորձի ուսումնասիրմանը: Դասընթացի մասնակիցները կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ արդեն իսկ ձեռք բերված նոր փորձը կփոխանցեն իրենց աշխատակիցներին:

Համաշխարհային մաքսային կազմակերպության գլխավոր քարտուղար Կունիո Միկուրիան սույն թվականի հոկտեմբերի 22-ին երկօրյա աշխատանքային այցով ժամանել է Հայաստան՝ տեղում ծանոթանալու մաքսային համակարգի աշխատանքին ու իրականացված և շարունակվող բարեփոխումներին: Հանդիպման ժամանակ նշվեց, որ հենց այդ բարեփոխումների շնորհիվ Հայաստանը բարձր գնահատականի է արժանացել ինչպես Համաշխարհային մաքսային կազմակերպության, այնպես էլ ՀԲ Միջազգային ֆինանսական կորպորացիայի կողմից: Մաքսային համակարգի ղեկավարության հետ հանդիպման ժամանակ քննարկվել է Համաշխարհային մաքսային կազմակերպության կողմից իրականացվող 'Կոլումբոս' ծրագրի շրջանակներում կազմված գործողությունների ծրագիրը: Այդ ռազմավարական գործողությունների ծրագիրը ներառում է մաքսային համակարգի բոլոր առաջնահերթ սկզբունքներն ու խնդիրները, որոնք պետք է իրագործվեն առաջիկա տարիներում:

Սույն թվականի նոյեմբերի 2-11-ը ՀՀ ԿԱ ՊԵԿ ուսումնական կենտրոնում Եվրամիության խորհրդատվական խմբի աջակցությամբ մեկշաբաթյա ուսումնական դասընթաց է կազմակերպվել հետբացթողումային հսկողության վարչության աշխատակիցների համար, որի նպատակն էր ուսումնասիրել և կատարելագործել հետբացթողումային ստուգումների ընթացակարգերը, ուսումնասիրել հետբացթողումային հսկողության հիմնական մեթոդաբանությունը, ինչպես նաև ստուգումների պլանավորումը: Դասընթացի ընթացքում քննարկվել են նաև մի շարք հարցեր՝ կապված հետբացթողումային հսկողության ոլորտում ռիսկերի կառավարման համակարգի ներդրման և կիրառման հետ: Դասընթացի ավարտից հետո բոլոր մասնակիցներին հանձնվել են ավարտական վկայականներ:

Բացի վերոնշյալից առաջիկա 18 ամիսների ընթացքում նախատեսվում է ևս մի քանի դասընթացներ կազմակերպել հետբացթողումային հսկողության ժամանակ կիրառվող հիմնական մեթոդաբանության վերաբերյալ:

3.3 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների

21.09.2009թ.-ից մինչև 20.11.2009թ.-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի կողմից քննարկվել են թվով 25 ծառայողական քննության ընթացքում ստեղծված նյութեր, որի արդյունքում թվով 48 հարկային ծառայողներ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի կողմից 21.09.2009թ.-ից մինչև 20.11.2009թ.-ը քննարկվել է թվով 29 բողոք, որից.

- բավարարվել է 6 բողոք,
- բավարարվել է մասնակի 1 բողոք
- կարճվել է 2 բողոք,
- մերժվել է 20 բողոք:

3.4 Միջազգային համագործակցություն

Սույն թվականի հոկտեմբերի 6-ից 10-ը կայացավ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահ Գ. Խաչատրյանի պաշտոնական գործուղումը ք.Կազան, որի նպատակն էր մասնակցել ԱՊՀ մասնակից-պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի հերթական 50-րդ նիստի աշխատանքներին, ԱՊՀ մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի նախագահի ընտրություններին:

Նիստի ընթացքում քննարկվել են ԱՊՀ մասնակից պետությունների միջազգային իրավական բազայի վերանայման հարցերը, մաքսային ծառայությունների միասնական տեղեկատվական համակարգի ստեղծման հնարավորությունները, հետբացթողումային հսկողության նպատակով

տեղեկատվության փոխանակման կարգը, ինչպես նաև Խորհրդի 2010 թվականի աշխատանքների ծրագրի նախագիծը:

Տեղի են ունեցել երկկողմ հանդիպումներ Ռուսաստանի Դաշնության ֆեդերալ մաքսային ծառայության, Ուկրաինայի, Բելառուսի և ԱՊՀ մի շարք այլ երկրների մաքսային ծառայությունների ղեկավարների հետ, որոնց ընթացքում քննարկվել են երկուստեք հետաքրքրություն ներկայացնող որոշ հարցեր: Հնչել են համապատասխան զեկույցներ նախորդ տարվա ընթացքում ԱՊՀ անդամ-երկրների մաքսային ծառայությունների աշխատանքների վերաբերյալ, սահմանվել է 2010 թվականի համար նախատեսվող աշխատանքների շրջանակը:

Նիստի ընթացքում, ի թիվս օրակարգում ընդգրկված մի շարք հարցերի, քննարկվել են նաև կողմերի համար արդիական նշանակություն ունեցող և 2010 թվականի ընթացքում քննարկման ենթակա մի շարք հարցեր:

Տեղի են ունեցել նաև ԱՊՀ մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի նախագահի և խորհրդի քարտուղարի ընտրությունները:

03.11.2009 թվականին ԱՄՆ-ում հայ-ամերիկյան միջկառավարական հանձնաժողովի նիստում ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահ Գ. Խաչատրյանը ելույթ է ունեցել, որի ընթացքում ներկայացրել է ՀՀ ԿԱ ՊԵԿ շրջանակներում տեղի ունեցող բարեփոխումները և հետագա ծրագրերը:

| | |
|-------------------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| Փաստաթուղթ | «Հայաստանի Հանրապետության կառավարության և Իտալիայի Հանրապետության կառավարության միջև մաքսային գործերում համագործակցության և փոխադարձ օգնության մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» ՀՀ ԱԺ որոշումը |
| Ամսաթիվը և համարը | 07 հոկտեմբերի, 2009թ., Ն-162-4 |
| Հրապարակումը | ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 54(720) 28.10.09թ. |
| Ուժի մեջ է | 07.10.2009 |

Համառոտ նկարագիր

Որոշմամբ վավերացվում է 2009թ. մարտի 6-ին Երևանում ստորագրված՝ «ՀՀ կառավարության և Իտալիայի Հանրապետության միջև մաքսային գործերում համագործակցության և փոխադարձ օգնության մասին» համաձայնագիրը:

| | |
|-------------------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| Փաստաթուղթ | «Հայաստանի Հանրապետության կառավարության և Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» կոնվենցիան և արձանագրությունը վավերացնելու մասին» ՀՀ ԱԺ որոշումը |
| Ամսաթիվը և համարը | 29 հոկտեմբերի, 2009թ., 169-Ն |
| Հրապարակումը | ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 57(723) 18.11.09թ. |
| Ուժի մեջ է | 29.10.2009թ. |

Համառոտ նկարագիր

Որոշմամբ վավերացվում է 2009թ. հունիսի 23-ին Լյուքսեմբուրգում ստորագրված «ՀՀ կառավարության և Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» կոնվենցիան և արձանագրությունը:

| | |
|-------------------|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| Փաստաթուղթ | «Հայաստանի Հանրապետության և Խորվաթիայի Հանրապետության միջև եկամուտների կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» ՀՀ ԱԺ որոշումը |
| Ամսաթիվը և համարը | 29 հոկտեմբերի, 2009թ., 170-Ն |
| Հրապարակումը | ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 57(723) 18.11.09թ. |
| Ուժի մեջ է | 29.10.2009թ. |

Համառոտ նկարագիր

Որոշմամբ վավերացվում է 2009թ. մայիսի 22-ին Երևանում ստորագրված «ՀՀ և Խորվաթիայի Հանրապետության միջև եկամուտների կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը

կանխելու մասին» համաձայնագիրը:

3.5 Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում

3.5.1 Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում /հարկային ծառայության մասով

2009թ. հոկտեմբերի 16-ից ՀՀ ԿԱ ՊԵԿ համակարգում ընթանում է Երևան քաղաքի հարկային տեսչությունների հարկային ծառայողների ատեստավորման գործընթացը: Հոկտեմբեր ամսին ատեստավորման թեստային փուլին մասնակցել են 537 հարկային ծառայողներ, որոնցից 83-ը՝ հարցազրույցի փուլին: Ատեստավորված հարկային ծառայողներից 41-ը մրցութային և ատեստավորման հանձնաժողովի որոշմամբ չեն համապատասխանել զբաղեցրած պաշտոնին: Նրանցից 26-ը ազատվել է աշխատանքից, իսկ 15-ը՝ իջեցվել զբաղեցրած պաշտոնից:

2009թ. հոկտեմբերի 24-ին հայտարարվել է մրցույթ՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության 41 թափուր պաշտոնները համալրելու նպատակով: Մրցույթն անց է կացվելու 2009թ. նոյեմբերի 25-ին:

3.5.2 Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում /մաքսային ծառայության մասով

2009թ. հոկտեմբերի 5-ին կայացավ մաքսային ծառայության 2 թափուր պաշտոնների համար հայտարարված մրցույթը: Մրցույթի արդյունքում հաղթող են ճանաչվել 2 մասնակից, որոնք ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 06.10.2009թ. հրամաններով նշանակվել են համապատասխան պաշտոնների:

2009 թ. հոկտեմբերի 23-ին հայտարարվել է մաքսային ծառայության 3 թափուր պաշտոնների համար մրցույթ: Մրցույթին մասնակցելու համար դիմել է 47 քաղաքացի: Մրցույթը կանցկացվի ս.թ. նոյեմբերի 25-ին Արարատյան տարածաշրջանային մաքսատան մասնաշենքում:

3.6 Հետադարձ կապ մամուլի արձագանքներ և «Թեժ գծի» վերլուծություն

3.6.1 Հետադարձ կապ, մամուլի արձագանքներ և «Թեժ գծի» վերլուծություն /հարկային ծառայության մասով/

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հարկային ծառայության «Թեժ գիծ»-ը պաշտոնապես գործում է 2008թ. հոկտեմբերի 14-ից: 2009թ. հոկտեմբեր ամսին ՀՀ ԿԱ ՊԵԿ ՀԾ «Թեժ գծով» ստացվել է 696, իսկ նոյեմբեր ամսին՝ 210 բողոքներ և առաջարկություններ:

Բողոքների հիմնական մասը վերաբերել է պարզևավճարների տրամադրման նոր կարգին, պայմաններին, ժամկետներին, ՏՀՏ-ներում առաջացած հերթերին, սեպտեմբերի վիճակահանության շահող թվերին և շահումների տրամադրման կարգին, ինչպես նաև վիճակահանությանն առնչվող բազմաթիվ այլ հարցերի:

Առաջարկությունները հիմնականում վերաբերել են պարզևավճարների տրամադրման նոր կարգին և պայմաններին: Բողոքների մի մասն էլ առնչվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտման փաստերին: Հարցերի մի ստվար խումբ էլ վերաբերել է հարկային օրենսդրությանը: Մասնագիտական պարզաբանումներ ստանալու համար քաղաքացիներին տրամադրվել են ՏՀՏ-ների համապատասխան բաժինների հեռախոսահամարները:

3.6.2 Հետադարձ կապ, մամուլի արձագանքներ և «Թեժ գծի» վերլուծություն /մաքսային ծառայության մասով/

Սեպտեմբերի 20-ից մինչև նոյեմբերի 20-ը «Թեժ գծով» ստացվել է 350-400 զանգ: Զանգահարողների գերակշիռ մասը խնդրել է տրամադրել մաքսային մարմինների գործունեության և մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման հետ կապված տեղեկատվություն կամ խորհրդատվության կարիք է ունեցել:

Նշված ժամանակահատվածում արձանագրվել է 11 բողոք, որոնք հիմնականում վերաբերել են ապրանքի մաքսային արժեքի որոշմանը, մաքսային ընթացակարգերի, ինչպես նաև արտերկրից ուղարկված ծանրոցների մաքսազերծման հետ կապված խնդիրներին:

Կախված անհրաժեշտությունից՝ քաղաքացուն կամ զանգահարել և պարզաբանում են տվել խնդրի առնչությամբ, կամ էլ հրավիրել են ՊԵԿ մաքսային ծառայության համապատասխան ստորաբաժանում հարցն ավելի մանրամասն ուսումնասիրելու և տեղում անհրաժեշտ պարզաբանումներ տալու նպատակով:

3.7 Հարկային և մաքսային վիճակագրական մի քանի թվեր

3.7.1 Հարկային վիճակագրության մի քանի թվեր

| 1 | Ցուցանիշ | 2009 թվական | | |
|-----|-----------------------------------------------------------------------------------|-------------|-------------------|--------------------------------------------------|
| | | սեպտեմբեր | հունվար-սեպտեմբեր | Աճը նախորդ տարվա նկատմամբ (հունվար-սեպտեմբեր), % |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Հաշվառված՝ ՀՎՀՀ ստացած հարկ վճարողներ (միավոր) | 1185 | 11920 | 68.1 |
| 2 | Հարկային մարմնի կողմից պետ. բյուջե հավաքագրված եկամուտներ (մլն. դրամ), այդ թվում՝ | 35291.1 | 285949.1 | 89.5 |
| 2.1 | ԱԱՀ | 9366.4 | 58122.1 | 74.8 |
| 2.2 | Շահութահարկ | 6212.9 | 63028.2 | 95.7 |
| 2.3 | Ակցիզային հարկ | 588.9 | 4239.6 | 87.3 |
| 2.4 | Եկամտահարկ | 4887.9 | 42404.0 | 109.9 |
| 2.5 | Պարտադիր սոցիալական ապահովության վճար | 8668.1 | 74131.4 | 101.6 |
| 2.6 | Այլ | 5567.0 | 44022.7 | 73.9 |
| 3 | Հարկային մարմնի կողմից կատարված ստուգումներ (հատ) | 2272 | 20485 | 169.4 ¹ |
| 4 | Հարկային ստուգումների արդյունքում լրացուցիչ առաջադրված գումարներ (մլն. դրամ) | 4419.9 | 25349.3 | 82.8 |

| 1 | Ցուցանիշ | 2009 թվական | | |
|-----|-----------------------------------------------------------------------------------|-------------|-------------------|--------------------------------------------------|
| | | հոկտեմբեր | հունվար-հոկտեմբեր | Աճը նախորդ տարվա նկատմամբ (հունվար-հոկտեմբեր), % |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Հաշվառված՝ ՀՎՀՀ ստացած հարկ վճարողներ (միավոր) | 1366 | 13286 | 68.5 |
| 2 | Հարկային մարմնի կողմից պետ. բյուջե հավաքագրված եկամուտներ (մլն. դրամ), այդ թվում՝ | 36,880.9 | 322,830.0 | 90.2 |
| 2.1 | ԱԱՀ | 9,446.9 | 67,569.0 | 73.7 |
| 2.2 | Շահութահարկ | 6,376.7 | 69,405.0 | 97.6 |
| 2.3 | Ակցիզային հարկ | 599.4 | 4,839.0 | 87.5 |
| 2.4 | Եկամտահարկ | 5,184.9 | 47,588.9 | 111.1 |
| 2.5 | Պարտադիր սոցիալական ապահովության վճար | 9,226.2 | 83,357.6 | 101.7 |
| 2.6 | Այլ | 6,046.8 | 50,069.5 | 77.3 |
| 3 | Հարկային մարմնի կողմից կատարված ստուգումներ (հատ) | 2,195.0 | 22,680.0 | 175.0 ¹ |
| 4 | Հարկային ստուգումների արդյունքում լրացուցիչ առաջադրված գումարներ (մլն. դրամ) | 3,111 | 28,460.1 | 87.2 |

3.7.2 Մաքսային վիճակագրության մի քանի թվեր

| 1 | Ցուցանիշ | 2008թ. | | 2009թ. | | Աճը նախորդ տարվա նկատմամբ, % | |
|-----|----------------------------------------------------------------------------------|-------------------|-----------|-------------------|-----------|------------------------------|-----------|
| | | Հունվար-սեպտեմբեր | սեպտեմբեր | հունվար-սեպտեմբեր | սեպտեմբեր | Հունվար-սեպտեմբեր | սեպտեմբեր |
| 1 | Մաքսային մարմնի կողմից պետական բյուջե հավաքագրված հարկային եկամուտներ (մլն դրամ) | 204 642 | 26 801 | 158 175 | 20 848 | 77.3 | 77.8 |
| 2 | Արտաքին առևտրի ապրանքաշրջանառությունը (մլն դրամ), այդ թվում՝ | 1 218 083 | 176 631 | 1 010 263 | 139 048 | 82.9 | 78.7 |
| 2.1 | արտահանում (մլն դրամ) | 252 298 | 39 556 | 198 212 | 27 467 | 78.6 | 69.4 |
| 2.2 | ներմուծում (մլն դրամ) | 965 786 | 137 075 | 812 051 | 111 581 | 84.1 | 81.4 |
| 3 | Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների թիվը (միավոր) | 26 190 | 5 021 | 17 739 | 3 317 | 67.7 | 66.1 |

¹ Ստուգումների թվաքանակի աճը հիմնականում պայմանավորված է կանխարգելիչ ստուգումների (ՀԴՄ-ների կիրառման, հարկային օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում) թվաքանակի աճով, իսկ պետբյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտմանն ուղղված ստուգումների թիվը նվազել է շուրջ 12%-ով:

| | Ցուցանիշ | 2008թ. | | 2009թ. | | Աճը նախորդ տարվա նկատմամբ, % | |
|-----|----------------------------------------------------------------------------------|-------------------|-----------|-------------------|-----------|------------------------------|-----------|
| | | Հունվար-հոկտեմբեր | հոկտեմբեր | հունվար-հոկտեմբեր | հոկտեմբեր | Հունվար-հոկտեմբեր | հոկտեմբեր |
| 1 | Մաքսային մարմնի կողմից պետական բյուջե հավաքագրված հարկային եկամուտներ (մլն դրամ) | 236,621 | 31 978 | 180 679 | 22 504 | 76.4 | 70.4 |
| 2 | Արտաքին առևտրի ապրանքաշրջանառությունը (մլն դրամ), այդ թվում՝ | 1 396 675 | 178 591 | 1 161 149 | 152 592 | 83.1 | 85.4 |
| 2.1 | արտահանում (մլն դրամ) | 285 536 | 33 239 | 226 110 | 28 084 | 79.2 | 84.5 |
| 2.2 | ներմուծում (մլն դրամ) | 1 111 138 | 145 353 | 935 039 | 124 508 | 84.2 | 85.7 |
| 3 | Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների թիվը (միավոր) | 29 204 | 5 492 | 19 555 | 3 639 | 67.0 | 66.3 |